

– Ի՞նչ ըրիր, մեռա՛ւ աղջիկը,– ըսաւ Գրիգոր եւ ծռեցաւ տեսնելու խեղճին վիճակը:

Իսկ Սուրեն՝

– Երկայն խօսակցութեան եւ ողբերու ժամանակ չէ, քալէ՛, եկ ինձ հետ,– զրուցեց հրամայական ձայնիւ:

Եւ երբ դիմացի սենեակը մտան՝ ծածկուած ճրագի աղօտ լուսով մաքուր պարեգօտ մը, վերարկու մը եւ փաթօնց մը ցցուց.

– Ասոնք յագուե՛ եւ աս զէնքերն էլ որն որ քեզի յարմար գա ա՛ռ,– ըսաւ:– Շո՛ւտ ըրէ, ժամանակ չի կայ կորսնցնելու:

Եւ ինք նոյն միջոցին՝ Գագրիկ տեսաւ, որ ահագին խռիւներու դէզի մը տակ կորսուած կ'ուզար:

– Ապրիս, Գագրիկ, դեռ կա՞՞,– հարցուց:

– Ոչ, այս վերջի բեռն է:

– Լաւ, դի՛ր այդ ալ ծառայից սենեկին դռան առաջ:

Բռնկցուց եղոտ փայտ մը, սկսաւ տալ կրակը բոլոր դռներու դիմաց դիզուած խռիւներուն. կ'ես-գիշերուան կանոնաւոր քամին սկսած էր արդէն, վայրկեանին լուսաւորուեցաւ տունը: Գագրիկի թելէն բռնած ցցուց նոյնպէս զէնքեր եւ հագուստներ եւ ինք նաեւ շուտ մը տուաւ օրինակը. հագուեցաւ, գլուխը փաթթեց ճերմակը, առաւ կապարճը, աղեղը, նիզակը, պողովատիկը մէջքէն կախեց, եւ երբ երեքն էլ պատրաստ էին, առաւ ջիտեայ մախաղը ձեռքը եւ ելաւ դուրս. դռան առջեւ Գագրիկի հետ վառեց մնացած բոլոր խռիւրը: Բոցը կը բարձրանար: Սուրեն հեգնական եւ սոսկալի ծիծաղով մը նկատեց.

– Զիմա հանգիստ եմ,– ըսաւ Գրիգորի,– նայէ՛ ինչպէ՛ս գեղեցիկ է, ինչպէ՛ս կը նմանի սա Վարդանաբերդի հրդեհին:

– Ո՛հ, ես այսպիսի անգուրջ տեսարաններ չեմ սիրեր...

– Ես էլ նոյնպէս. վասնզի այս հրդեհը եւ մէջի զոհերը քիչ են մերիններուն քով: